ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am
Ե/2013-26.11./682
26.11. 2013 թ.

ՀՀ Վարչական դատարան
Դիմումատու՝
«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ» ՀԿ
Պետական ռեգիստրի վկայական
03 Ա 0704086
ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 59
Պատասխանող՝

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյան
ք. Երևան Բաղրամյան 26

# ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ

(ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2013թ. սեպտեմբերի 3-ին մաքսային միությանը միանալուն ուղղված գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին)

ՀՀ Վարչական դատարանի եմ դիմում՝ իրացնելով ՀՀ Սահմանադրության 1, 2, 5, 6, 18, 19, 34, 43-րդ հոդվածներով, ՀՀ միջազգային պայմանագրերի մասին օրենքի, ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքում ձևակերպված դատական պաշտպանության իրավունքը:

## 1. Փաստերը, որոնց վրա հիմնված են սույն հայցի պահանջները

### 1.1.ՀՀ քաղաքականությունը ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագրի կնքման վերաբերյալ.

1.1. 1. 2009 թվականի դեկտեմբերի 24-ին ՀՀ կառավարության թիվ 1523-Ն[1] որոշմամբ ընդունվել է 2010 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին որոշումը, որի համաձայն ՀՀ արտաքին գործերի նախարարությանը հանձնարարվել է իրականացնել նախապատրաստում ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագրի կնքման շուրջ բանակցություններ սկսելու համար:

1.Տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=72681

1.1.2. 2010 թվականի փետրվարի 5-ի ՀՀ վարչապետի թիվ 62-Ա[2] որոշման համաձայն Տ. Դավթյանը նշանակվել է Եվրոպական Միության արևելյան գործընկերության շրջանակներում իրականացվելիք պետական կառավարման մարմինների զարգացման համապարփակ ծրագրի ազգային համակարգող:

11.3. 2010 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1126-Ա[3], 2011 թվականի մայիսի 18-ի թիվ 433-Ա[4], 2011 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1015-Ա[5] և 2013 թվականի մարտի 18-ի թիվ 207-Ա[6] ՀՀ վարչապետի որոշումներով հաստատվել է ՀՀ և ԵՄ-ի միջև ասոցացման համաձայնագրի բանակցությունների շրջանակներում Եվրոպական միության պատվիրակության՝ ՀՀ այցի նպատակներով համապատասխանաբար 978000, 846000, 766000, 638500 ՀՀ դրամի սահմաններում ծախսերը պետական բյուջեի միջոցների հաշվին կատարելը:

1.1.4. 2011թ. հուլիսի 12-ին ՀՀ կառավարությունը կայացրել է թիվ 642-Ա[7] որոշումը ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի նիստի N 43 արձանագրային որոշման պահանջների կատարումն ապահովող միջոցառումների մասին, որի համաձայն, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների, էկոնոմիկայի, քաղաքաշինության, տրանսպորտի և կապի նախարարներին ցուցում է տրվել՝ «որոշման պահանջները կատարելու ընթացքում առաջնայնությունը պետք է տալ ՀՀ և ԵՄ-ի ասոցացման գործընթացից բխող ակտերի մշակմանը»:

1.1.5. 2012թ. հունիսի 21-ին ՀՀ Ազգային Ժողովն ընդունել է «ՀՀ կառավարության ծրագրին հավանություն տալու մասին որոշումը»[8], որի 3.1.5. միջազգային ինտեգրացիան և արտաքին տնտեսական քաղաքականությունը բաժնում սահմանվել է, « ՀՀ կառավարությունը ավարտին կհասցնի Եվրամիության հետ ասոցացման համաձայնագրի, այդ թվում՝ խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու ստեղծման շուրջ բանակցությունները»:

1.16. 2011 թ. նոյեմբերի 24-ի ՀՀ նախագահի թիվ ՆՀ-299-Ն[9] հրամանագրով հաստատվել է ՀՀ և ԵՄ-ի միջև «Աջակցություն ՀՀ կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա ասոցացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին» ծրագրի ֆինանսավորման համաձայնագիրը:

1.1.7. 2012 թվականի նոյեմբերի 22-ի ՀՀ կառավարության թիվ 1481-Ա[10] որոշմամբ հաստատվել է ՀՀ և ԵՄ-ի ասոցացման համաձայնագրի նախագծով նախատեսված՝ էներգետիկայի բնագավառում ներդաշնակեցման ենթակա իրավական ակտերի միասնական համալիր ցանկը:

---

2. Տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=65816
3. Տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=64226
4. Տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=67904
5. Տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=71814
6. Տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=82105
7. Տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=73951
8. Տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76786
9. Տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=72230
10. Տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=79726

1.1.8. 2012թ. նոյեմբերի 8-ի ՀՀ նախագահի թիվ ՆՀ-273-Ն[11] հրամանագրով հաստատվել է ՀՀ և ԵՄ-ի միջև «Աջակցություն ՀՀ կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա ասոցացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին. փուլ 2» ֆինանսավորման համաձայնագիրը:

1.1.9. 2011 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՀ վարչապետի թիվ 1161-Ա[12] որոշմամբ հաստատվել է Եվրոպական Միության Արևելյան գործընկերության շրջանակներում պետական կառավարման մարմինների զարգացման համապարփակ ծրագրի ինստիտուցիոնալ բարեփոխումների ծրագրերը:

1.1.10. 2010 թ. հոկտեմբերի 11-ի թիվ 845-Ա[13], 2011 թվականի մարտի 21-ին թիվ 204-Ա[14], 2011թ. հուլիսի 4-ին թիվ 665-Ա[15], 2012 թ. հունվարի 26-ին թիվ 45-Ա[16], 2012թ. դեկտեմբերի 21-ին թիվ 1265-Ա[17] ՀՀ վարչապետի որոշումներով ՀՀ պատվիրակությունները գործուղվել են Բրյուսել՝ Եվրոպական միության միջև ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների լիազումար նիստերին մասնակցելու համար: Գործուղումների հետ կապված ծախսերը կատարվել է ՀՀ 2010թ., 2011թ., 2012 թվականի պետական բյուջեից:

1.1.11. 2013թ. մայիսի 23-ին ՀՀ Ազգային Ժողովն ընդունել է «ՀՀ կառավարության ծրագրին հավանություն տալու մասին որոշումը»[18], որի 3.2.5. Միջազգային ինտեգրացիան և արտաքին տնտեսական քաղաքականությունը բաժնում սահմանվում է, «ՀՀ կառավարությունը.... ավարտին կհասցնի Եվրամիության հետ ասոցացման համաձայնագրի, այդ թվում՝ խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու ստեղծման շուրջ բանակցությունները»:

1.1.12. 2013 թ. հուլիսի 18-ին ՀՀ կառավարությունը իր թիվ 800-Ն[19] որոշմամբ հաստատել է ՀՀ կառավարության 2013թ. գործունեության միջոցառումների և գերակա խնդիրները հաստատելու մասին ծրագրերը, որի համաձայն, «ՀՀ արտաքին գործերի նախարարությունն իր գործունեության մեջ ավարտին է հասցնելու ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագրի հիմնական մասի շուրջ բանակցությունները, շարունակելու է աջակցել ԵՄ-ի հետ խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու շուրջ բանակցություններին, նախապատրաստելու է ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագրի տեքստը՝ նախաստորագրման համար, ապահովելու է ԵՄ-ի հետ մուտքի վիզայի տրամադրման գործընթացի դյուրացման և հետընդունման համաձայնագրերի վավերացման ներպետական գործընթացը, վարելու է խորհրդակցություններ ՀՀ-ԵՄ եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագիրը փոխարինող փաստաթղթի՝ ասոցացման

---

11. Տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=79022
12 . Տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76686
13. Տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=61388
14. Տես՝http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=66399
15. Տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=69719
16. Տես՝http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75011
17. Տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80895
18. Տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83534
19. Տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=84715

օրակարգի շուրջ, շարունակելու է համապատասխան քայլեր ձեռնարկել ԵՄ-ի հետ շարժունակության շուրջ գործընկերության արդյունավետ իրագործման ուղղությամբ, իրականացնելու և համակարգելու է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում Հայաստանի նախագահության հետ կապված աշխատանքները»:

**1.2. ՀՀ քաղաքականությունը Մաքսային միությանը միանալու վերաբերյալ.**

1.2.1. 2013թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ հանդիպման ժամանակ կատարել է հայտարարություն[20] Մաքսային միությանը միանալու մասին:

1.2.2. 2013թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի և Ռուսաստանի դաշնության նախագահ Վ. Պուտինի կողմից կատարված հայտարարությունները երկկողմ ստորագրվել և հրապարակվել www.president.am[21] կայքէջում «ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը և ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը ստորագրել են համատեղ հայտարարություններ» վերնագրով:

1.2.3. 2013թ. սեպտեմբերի 19-ին ՀՀ վարչապետ Տ. Սարգսյանի կողմից կայացվել է N 834-Ա որոշումը, ըստ որի սահմանվել է ստեղծել ոլորտային աշխատանքային խմբեր[22]:

1.2.4. 2013թ. սեպտեմբերի 19-ին ՀՀ կառավարության կողմից հրավիրված նիստի N 37 արձանագրային որոշմամբ կազմվել է «Մաքսային միության անդամակցելու նպատակով իրականացվելիք առաջնահերթ միջոցառումների» ցանկը[23]:

1.2.5. 2013թ. հոկտեմբերի 1-ին Սանկտ Պետերբուրգում տեղի է ունեցած հայ-ռուսական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի նիստին, նախքան նիստի բացումը կայացել է հանձնաժողովի համանախագահներ՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի և ՌԴ տրանսպորտի նախարար Մաքսիմ Սոկոլովի առանձնազրույցը: Առանձնազրույցի ժամանակ ՀՀ վարչապետ Տ. Սարգսյանը՝ հայտնել է, « (.....) ինձ համար, որպես երկրի վարչապետի, հատկապես հաճելի է ընդգծել, որ 2012 թվականին արձանագրվել է Հայաստանից Ռուսաստան արտահանման 26 տոկոս աճ: (.....) Սակայն այս առաջընթացի հետ մեկտեղ մեր առևտրատնտեսական հարաբերություններում տեղի է ունեցել մի իրադարձություն, որն ունի հիմնարար նշանակություն: Հայաստանը **որոշում է կայացրել մուտք գործել Մաքսային միություն**, իսկ հետագայում նաև մասնակցել Եվրասիական տնտեսական միության կազմավորման գործընթացին[24] (...)»:

---

20. Տես՝ հավելված 1 http://hetq.am/arm/news/29081/

21. Տես՝ հավելված 2 ( http://www.president.am/hy/press-release/item/2013/09/03/President-Serzh-Sargsyan-and-President-Vladimir-Putin-joint-statement/ )

22. Տես հավելված 3 2013թ. սեպտեմբերի 19-ին ՀՀ վարչապետի N 834-Ա որոշում

22. Տես՝ հավելված 4 2013թ. սեպտեմբերի 19-ին ՀՀ կառավարության կողմից հրավիրված նիստի N 37 արձանագրային որոշմամ

24. Տես՝ հավելված 5 http://www.gov.am/am/news/item/10737/ հրապարակված «Հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովի նիստում Տիգրան Սարգսյանը և Մաքսիմ Սոկոլովը քննարկել են երկկողմ ռազմավարական կապերի ամրապնդման ուղիները» նյութը

1.2.6. 2013թ. սեպտեմբերի 13-ին azatutyun.am կայքէջում հրապարակվել է «Ֆյուլե. Վիլնյուսում Հայաստանի հետ փաստաթուղթ չի ստորագրվի[25]» նյութը: Ըստ վկայակոչված նյութի. Եվրամիության ընդլայնման հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն՝ պատասխանելով «Ազատություն» ռադիոկայանի հարցին հայտնել է, որ 2013թ.նոյեմբերին Վիլնյուսում կայանալիք Արևելյան գործընկերության գագաթնաժողովին Հայաստանի հետ որևէ փաստաթղթի ստորագրում չի ակնկալվում:

Ինչ վերաբերում է Ասոցացման համաձայնագրին, ապա հանձնակատարը ևս մեկ անգամ ընդգծել է, որ սա երկու պայմանագիր չէ՝ բաղկացած խորը և համապարփակ ազատ առևտրի և Ասոցացման համաձայնագրերից, սրանք մեկ ամբողջական պայմանագրի երկու բաղադրիչներն են, որոնց շուրջ իրենք բանակցել են հայ գործընկերների հետ:

1.2.6.1. 2013թ. սեպտեմբերի 13-ին azatutyun.am կայքէջում հրապարակած «Ֆյուլե. Վիլնյուսում Հայաստանի հետ փաստաթուղթ չի ստորագրվի» նյութում՝ Մաքսային միությանը միանալու դիմաց ի՞նչ է ստանալու Հայաստանը Ռուսաստանից հարցին, ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը պատասխանել է. «Խոսքը գնում է ոչ թե ինչ է տվել Ռուսաստանը, որ մենք միանանք Մաքսային միությանը, այլ խոսքը գնում է նրա մասին, որ Հայաստանն ունի դաշնակցային հարաբերություններ Ռուսաստանի հետ: Մենք ի սկզբանե Արևելյան գործընկերության նախաձեռնության այս բանակցային գործընթացի սկզբից և անգամ դրանից առաջ միշտ ասել ենք, որ մենք պատրաստ ենք հնարավորինս սերտ, հնարավորինս խոր հարաբերություններ ունենալ Եվրամիության հետ, մոտ լինենք Եվրամիությանը այնքան, ինչքան որ դա հնարավոր կլինի Եվրամիության, բայց ոչ ի վնաս և ի հաշիվ մեր դաշնակցային հարաբերություններին Ռուսաստանի հետ: Ինչ վերաբերում է Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու ստեղծման բանակցություններին և դոնորների կոնֆերանսին, որի կազմակերպման վերաբերյալ մենք խոսում ենք արդեն մոտավորապես 4 տարի, իսկ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտում բանակցությունները սկսվել են 1 տարի առաջ: Այսինքն, դա կապված չի եղել, եթե հիմա կապված է ինչ-որ առումով, բայց դա կապված չի եղել այդ բանակցությունների հետ: Եվ ինչպես ես ասացի, մենք մեր եվրոպացի գործընկերների հետ խոսում ենք այն եղանակների, այն հնարավորությունների մասին, որպեսզի հիմնվելով այն ձեռքբերումների, որը գրանցվել է Հայաստանի և Եվրամիության միջև, որ հնարավորինս առաջ շարժենք Հայաստանի և Եվրամիության հարաբերությունները»:

1.2.7. 2013թ. նոյեմբերի 15-ին Ազատություն TV-ի լրատվական կենտրոն հաղորդման ժամանակ հրապարակվել է Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանի հետ հարցազրույցը: (http://www.youtube.com/watch?list=PLMQcwD-eh6VjISJjy_A4zN-LWC_JXmwpJ&v=ijFXh0dmHa8#t=2002)

Հաղորդման շրջանակներում սկսած 28 րոպե 31 վայրկյանից անդրադարձ է կատարվել դեսպանի հետ հարցազրույցին, որում Ռուսաստանի դեսպան Իվան Վոլինկինին հայտնում է, որ «անդամակցելով Մաքսային Միությանը Հայաստանը ստիպված կլինի զիջել իր

25. Տես՝ հավելված 6-ը, (http://www.azatutyun.am/content/article/25105152.html)

ինքնիշխանության մի մասը, միևնույն ժամանակ դեսպանը հավելել է, որ իրենց ինքնիշխանության որոշակի մասը զիջում են նաև միության այլ անդամները ներառյալ Ռուսաստանը…»:

**2. Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին հիմնավորումները.**

**Հայցադիմումը վարույթ ընդունելու վերաբերյալ պնդումներ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի իմաստով.**

2.1. Կազմակերպության դատարան դիմելու իրավունքի վերաբերյալ պնդումներ.

ՀՀ Սահմանադրական դատարանը 2010թ. սեպտեմբերի 7-ին թիվ 906 որոշման 7-8-րդ կետերում ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված ժողովրդավարական եւ իրավական պետության, ինչպես նաեւ քաղաքացիական հասարակության կայացման համատեքստում հասարակական կազմակերպությունների՝ պետությունում ունեցած դերի և նշանակության մասին արտահայտել է հետևյալ դիրքորոշումը.

«Քաղաքացիական հասարակությունն ինքնուրույն եւ պետությունից անկախ հասարակական մեխանիզմների եւ հարաբերությունների համակարգ է, որը պայմաններ է ապահովում կոլեկտիվների եւ անհատների մասնավոր շահերի եւ պահանջմունքների բավարարման համար: Քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող սոցիալական կառուցակարգերի շրջանակում ուրույն տեղ են զբաղեցնում հասարակական կազմակերպությունները: Վերջիններիս դերն ինքնանպատակ չէ, քանի որ, **նախ՝** միավորումների գործունեությունը նախատեսված է Սահմանադրությամբ եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով, **երկրորդ՝** հասարակական կազմակերպություններն ունեն կոլեկտիվների եւ անհատների մասնավոր շահերի եւ պահանջմունքների իրացմանը, այդ թվում՝ հանրային կառավարմանը մասնակցելու գործառույթ, **երրորդ՝** հասարակական կազմակերպությունների միջոցով է, որ հասարակությունը հնարավորություն է ստանում հասարակական հսկողություն եւ վերահսկողություն սահմանել պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման նկատմամբ: Այս հանգամանքը, հատկապես կարևորվում է այն պարագայում, երբ առկա է ոչ թե անհատի, այլ իրավունքի կոլեկտիվ սուբյեկտի սուբյեկտիվ իրավունքների կամ օրինական շահերի խախտում:

Հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության եւ քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց

խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը եւ կարգը՝ հաշվի առնելով actio popularis բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները:

Նման իրավակարգավորումը կնպաստեր ոչ միայն խախտված իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության, այդ թվում դատական պաշտպանության արդյունա-վետության, այլև կբարձրացներ քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող՝ հասարակական կազմակերպությունների դերը: Ընդ որում, ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը եւ կարգի սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, **որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը:** Այս դիրքորոշումը համահունչ է նաեւ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, որի համաձայն՝ կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, **դատարանում,** պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում»:

Վերը վկայակոչված իրավական մեկնաբանությունից կարելի է պնդել, որ հասարակական կազմակերպությունը[26], որի տեսլականն է՝ «Մարդու արժանապատվության, ժողովրդավարության և խաղաղության գերակա արժեքներով ձևավորված հասարակություն» և ռազմավարական նպատակները բխում են տեսլականից կարող է սույն հայցով դիմել ՀՀ վարչական դատարան:

## 2.2. ՀՀ նախագահի վարչական մարմին լինելու վերաբերյալ պնդումներ

ՀՀ վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմիններ են՝ «Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները»:

ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածի մեկնաբանությունը տրված է 2010թ. ապրիլին հրատարակված «ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ» գրքում, վկայակոչված գրականության մեկնաբանության արդյունքում, հեղինակները եկել են այն եզրակացության, որ «Հանրապետության Նախագահը գործադիր իշխանության կրողներից մեկն է, իսկ նրա կարգավիճակը՝ որպես պետության գլուխ, և դրա հետ կապված տարբեր խնդիրները և

26. Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

գործառույթները հիմնականում ներդաշնակ են կիսանախագահական կառավարման մոդելում գործող իշխանությունների բաժանման յուրահատկություններին[27]:

Տվյալ մեկնաբանությունը թույլ է տալիս պնդելու, որ ՀՀ նախագահի պաշտոնը վարչական է և իսկզբանե նրա կողմից իրականացվում է վարչարարություն, ուստի նրա գործողությունները կամ անգործությունը ենթակա է վիճարկման ՀՀ վարչական դատարանում:

**3. Հայցի պահանջի իրավական հիմքերը.**

3.1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը), որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը կամ կատարել է վիճարկվող գործողությունը կամ չի կատարել որևէ հայցվող գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել, կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը, այնուամենայնիվ, հայցվորիս կողմից ներկայացվում է սույն պատճառաբանությունները և հիմնավորումները.

3.1.1. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է (ՀՀ Սահմանադրության 1-ին հոդված):

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի մեկնաբանությունը տրված է 2010թ. ապրիլին Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի կողմից հրատարակված «ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ» գրքում, վկայակոչված գրականության մեկնաբանության արդյունքում հեղինակները եկել են այն եզրակացության, որ «Սահմանադրությամբ ամրագրված ժողովրդավարական սկզբունքների, ինստիտուտների, նորմերի հասցեատերերն են **մարդը, հասարակությունը և պետությունը**, որն իրականացնում է հասարակության պետական կառավարման նպատակամղված գործառույթները: Որպես **ժողովրդավարության բարձրագույն իրավաբանական հիմք**՝ Սահմանադրությունն ամրագրում է ժողովրդաիշխանության սկզբունքը՝ **հաստատելով իշխանության պատկանելությունը ժողովրդին և նրան ճանաչելով իշխանության աղբյուր**: Միաժամանակ Սահմանադրությունը սահմանում է, որ ժողովուրդն իրեն պատկանող իշխանությունն իրականացնում է ոչ միայն անմիջապես, այլ նաև ներկայացուցչական ժողովրդավարությամբ[28]:

Ժողովրդավարական պետությունը ժողովրդի իշխանության քաղաքական կազմակերպությունն է, որն ապահովում է, քաղաքացիների հավասար մասնակցությունը պետական և հասարակական գործերի կառավարմանը, պետության հիմնական մարմինների

27. Տես՝ 2010թ. ապրիլին հրատարակված ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ գրքի 571 և 572 էջերը

28. 2010թ. ապրիլին հրատարակված ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ գրքի, ՀՀ սահմանադրության 1-ին հոդվածի մեկանաբանությունները 39-րդ էջում

ընտրությունը և հասարակության քաղաքական համակարգի բոլոր սուբյեկտների գործողության օրինականությունը, մարդու և քաղաքացու, պահպանությունը և պաշտպանությունը՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

Ժողովրդավարական պետության հիմնարար սկզբունքներն են՝

**I.պետության ներկայացուցչական մարմինների ընտրովիությունն ու նրանց մշտական կապը բնակչության հետ,**

**II. հրապարակայնությունը և թափանցիկությունը**[29]:

ՀՀ լինելով իրավական պետություն պետք է օժտված լինի կարևորագույն հատկանիշով՝ հրապարակային իշխանությամբ[30]:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի մեկնաբանությունից ելնելով կարելի է պնդել, որ ՀՀ նախագահի կողմից Մաքսային միությանը միանանալու վերաբերյալ 2013թ. սեպտեմբերի 3-ին Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ.Պուտինի հետ հանդիպման ժամանակ կատարած հայտարարությունը չի բխել ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն սկզբունքներից:

Ավելին, 2007թ. հուլիսի 20-ի Եվրոպայի խորհրդի անդամ երկրների նախարարների կոմիտեի բարեխիղճ կառավարման վերաբերյալ առաջարկությունների համաձայն՝«լավ կառավարման սկզբունքներից է թափանցիկության սկզբունքը, որի համաձայն պետական մարմինները պարտավոր են գործել թափանցիկ: Պետական մարմինները պարտավոր են հետևել, որ անհատները լինեն իրազեկ համապատասխան միջոցների օգնությամբ նրանց գործողությունները և որոշումները պետք է հրապարակայնացվեց: Պետական մարմինները պարտավոր են հարգել տեղեկատվության ազատության իրավունքը՝ պաշտոնական փաստաթղթեր ստանալու, հետևելով անձնական տվյալների պաշտպանության կանոններին:

ՀՀ-ն ի դեմս ՀՀ կառավարության, 2009 թվականից ի վեր իրականացրել է գործունեություն՝ ուղղված ՀՀ և Եվրոպական միության միջև Ասոցացման համաձայնագիր կնքելուն, իրականացրել է բազմաթիվ գործողություններ[31], որի վերաբերյալ ՀՀ քաղաքացիներն ունեցել են տեղեկություններ և սպասելիքներ:

ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի 2013թ. սեպտեմբերի 3-ին Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ. Պուտինի հետ հանդիպման ժամանակ կատարված հայտարարությունը Մաքսային միությանը միանալու մասին, չի բխել ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն սկզբունքներից, ինչպես նաև ՀՀ կողմից

29. Տես՝ 2010թ. ապրիլին հրատարակված ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ գրքի, ՀՀ սահմանադրության 1-ին հոդվածի մեկանաբանությունները 41-րդ էջում

30. Տես՝ 2010թ. ապրիլին հրատարակված ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ գրքի, ՀՀ սահմանադրության 1-ին հոդվածի մեկանաբանությունները 43-րդ էջում

31. Տես՝ սույն հայցադիմումի 1-ին մասի 1.1-ի կետում 1.1.1-1.1.12 եթակետերը

իրականացված քաղաքականությունից, ըստ որի 2013 թ. հուլիսի 18-ին ՀՀ կառավարությունը իր թիվ 800-Ն[32] որոշմամբ հաստատել է ՀՀ կառավարության 2013թ. գործողության միջոցառումների և գերակա խնդիրները հաստատելու մասին ծրագրերը, որոնց համաձայն «ՀՀ արտաքին գործերի նախարարությունն իր գործունեության մեջ ավարտին է հասցնելու ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագրի հիմնական մասի շուրջ բանակցությունները, շարունակելու է աջակցել ԵՄ-ի հետ խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու շուրջ բանակցություններին, նախապատրաստելու է ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրի տեքստը՝ նախաստորագրման համար, ապահովելու է ԵՄ-ի հետ մուտքի վիզայի տրամադրման գործընթացի դյուրացման և հետընդունման համաձայնագրերի վավերացման ներպետական գործընթացը, վարելու է խորհրդակցություններ ՀՀ-ԵՄ եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագիրը փոխարինող փաստաթղթի՝ Ասոցացման օրակարգի շուրջ, շարունակելու է համապատասխան քայլեր ձեռնարկել ԵՄ-ի հետ շարժունակության շուրջ գործընկերության արդյունավետ իրագործման ուղղությամբ, իրականացնելու և համակարգելու է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում Հայաստանի նախագահության հետ կապված աշխատանքները»:

Ըստ վկայակոչված պատճառաբանությունների կարելի է պնդել, որ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2013թ. սեպտեմբերի 3-ի հայտարարությունը Մաքսային միությանը միանալու մասին գործողությունը եղել է կամայական:

Համաձայն՝ 2007թ. հուլիսի 20-ի Եվրոպայի խորհրդի անդամ երկրների նախարարների կոմիտեի «բարեխիղճ կառավարման վերաբերյալ առաջարկությունների» պետական մարմինները պարտավոր են գործել օրենքով սահմանված կարգով: Նրանք չպետք է իրականացնեն կամ կատարեն կամայական միջոցառումներ նույնիսկ, եթե դա բխում է իրենց լիազորություններից: Իրենց գործունեությունն իրականացնելիս պետական մարմինները պարտավոր են հետևել ներպետական և միջազգային օրենսդրությանը և իրավունքի ընդհանուր սկզբունքին, պետական մարմինները իրենց լիազորություններն իրականացնում են օրենքով սահմանված կարգով և օրենքով սահմանված նպատակների համար:

3.1.2. ՀՀ իշխանությունը պատկանում է ժողովրդին (ՀՀ սահմանադրության 2-րդ հոդված): ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի 1-ին մասը ժողովրդի հիմնադիր իշխանությունը ճանաչում է որպես բոլոր իշխանությունների աղբյուր: Պետական իշխանությունն ածանցված է, ժողովրդի իշխանությունից, պայմանավորված է ժողովրդի կամքով ու պահանջմունքներով: <u>Ժողովրդի կամքով ձևավորված իշխանության համակարգը պետք է լինի թափանցիկ և ժողովրդին հաշվետու: Պետությունն իշխանությունը ստանում է ժողովրդից, իրականացնում է ժողովրդով, հանուն ժողովրդի:</u> Այսպիսով՝

32. Տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=84715

ժողովրդավարությունը ենթադրում է, որ ոչ թե պետությունն է գերիշխում հասարակության (քաղաքացիների, ժողովրդի) վրա, այլ, ընդհակառակը, հասարակությունն է գերիշխում պետության վրա:

Ժողովրդի ինքնիշխանությունից բխում է, որ Հայաստանում իշխանության գերագույն կրողը ժողովուրդն է: Ժողովրդական իշխանությունն անբաժանելի է և ունի միայն մեկ սուբյեկտ՝ ժողովուրդը:

Ժողովրդաիշխանությունը նշանակում է ժողովրդի գերակայություն որպես իշխանության աղբյուր և կրող, նրա իրավունքը՝ ինքնուրույն որոշել իր ճակատագիրը, հիմնադրել պետական իշխանության համակարգ, մասնակցել իր պետության քաղաքականության ձևավորմանը, պետական մարմինների կարգավորմանը, վերահսկել պետության գործունեությունը: Ժողովրդի ինքնիշխանությունից կամ ժողովրդաիշխանությունից բխում են ժողովրդի հետևյալ հիմնական իրավունքները. լինել գերագույն իշխանության աղբյուր և կրող, պատվիրակել սեփական լիազորություններն իշխանության ներկայացուցչական մարմիններին, մասնակցել պետության կառավարմանը և այլն [33]:

2007թ. հուլիսի 20-ի Եվրոպայի խորհրդի անդամ երկրների նախարարների կոմիտեի «Բարեխիղճ կառավարման վերաբերյալ առաջարկություններում»՝ պետության կառավարմանը մասնակցելու սկզբունքը ստացել է հետևյալ ձևակերպումը՝«Մասնակցության սկզբունքը իրենից ենթադրում է հետևյալը. եթե տվյալ գործողությունը (որոշումը) չպետք է իրականացվի արագ, ապա հանրությանը հնարավորություն պետք է ընձեռվի համապատասխան միջոցներով մասնակցություն ունենալ որոշումների ընդունման, դրանց նախապատրաստական փուլում կամ աշխատանքներում, այն որոշումներում, որոնք շոշափում են իրենց իրավունքներն և շահերը:

Սույն պարագայում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2013թ. սեպտեմբերի 3-ի հայտարարությունը Մաքսային միությանը միանալու մասին եղել է անակնկալ ողջ ՀՀ հասարակության համար:

Ավելին, ՀՀ Նախագահ Ս.Սարգսյանը իր՝Մաքսային միությանը միանալու մասին որոշման մասին որևէ պարզաբանում, իրազեկում չի ներկայացրել ՀՀ քաղաքացիներին, չի հիմնավորել իր որոշման «արագ իրականացնելու» մասին որևէ հիմնավորում:

ՀՀ հասարակության սպասելիքները կապված են եղել ՀՀ կողմից 2009թ.-ից ի վեր իրականացվող ՀՀ և ԵՄ-ի միջև Ասոցացման համաձայնագիր կնքելուն ուղղված և 2013թ. ՀՀ կառավարության ծրագրով հաստատված Ասոցացման համաձայնագիր կնքելու[34]

33. Տես՝ 2010թ. ապրիլին հրատարակված ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ գրքի, ՀՀ սահմանադրության 2-ին հոդվածի մեկնաբանությունները 56-րդ էջում

34. Տես՝ սույն հայցադիմումի 1-ին մասի 1.1.11-1.1.12. կետերը

քաղաքականության հետ, որը Մաքսային միությանը միանալու պարագայում այլևս իրատեսական չի կարող լինել[35]:

3.1.3. Ներկայացուցչական ժողովրդաիշխանությունը ժողովրդի իշխանության իրականացումն է Սահմանադրությամբ նախատեսված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց (ընտրովի Նախագահ) միջոցով: Ժողովուրդն այս դեպքում իր կամքն արտահայտում է ոչ թե ուղղակիորեն, այլ իր կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով, որոնց հանձնարարում է իր լիազորությունների իրականացումը որոշակի ժամկետով: Ներկայացուցչական մարմիններն արտահայտում են ժողովրդի կամքը ու շահերը:

Եվրոպայի Խորհրդի անդամ երկրների նախարարների կոմիտեի «Բարեխիղճ կառավարման վերաբերյալ առաջարկությունների» համաձայն/ամեն տեղ նշել փաստաթղթի կոդը, ընդունման ամսաթիվը/՝ հանրության կողմից կառավարվող որոշումներն են նորմատիվ և ոչ նորմատիվ որոշումները, որոնք ընդունվում են պետական մարմինների կողմից:

- Որոշումները պետք է շարադրվեն պարզ, հասարակ և հասկանալի ձևով:
- Կառավարչական որոշումները պետք է հրապարակայնացվեն, այն բանի համար, որ այդ որոշմամբ հետաքրքրվածներիը ունենան հստակ գիտելիքներ դրա մասին:
- Անհատն իրավունք ունի դատական կարգով բողոքարկել վարչական այն որոշումները, որոնք անմիջականորեն շոշափում են իր իրավունքները և շահերը, որը պետք է սկզբունքորեն հնարավոր լինի և որոշ դեպքերում նաև պետք է լինեն պարտադիր:
- Անհատները այդ որոշումները բողոքարկելիս չպետք է պետական մարմինների վնասներից տառապեն:

***Սույն պարագայում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի Մաքսային միությանը միանալու մասին 2013թ. սեպտեմբերի 3-ի հայտարարության վերաբերյալ ՀՀ քաղաքացիներն որևէ տեղեկություններ չեն ունեցել, այն հայտարարությունը, ընդհանրապես զուրկ է պատճառաբանությունից և անհասկանալի է ՀՀ քաղաքացիների համար, հետևաբար այն չի արտահայտում ՀՀ քաղաքացիների կամքը[36]:***

Ներկայացուցչական մարմինների, պաշտոնատար անձանց ու ժողովրդի միջև հարաբերությունները կառուցվում են լիազորությունների և վստահության վրա և սահմանվում են Սահմանադրությամբ: Սահմանադրությունն ամրագրում է այն լիազորությունների շրջանակը, որոնք ժողովուրդը հանձնում է իր ընտրյալներին:

35. Տես՝ սույն հայցադիմումի 1-ին մասի 1.1.1-1.1.12. կետերը
36. Տես՝ սույն հայցադիմումի 1.2.1. կետը.

Ներկայացուցչական ժողովրդաիշխանությունը պատասխանատու և ձեռնահաս կառավարում է: Մի կողմից՝ կառավարմամբ զբաղվում են հատուկ պատրաստված մարդիկ, իսկ, մյուս կողմից՝ նրանց գործունեությունն արդյունավետ է այնքանով, որքանով որ այն հենվում է ժողովրդի մեծամասնության վրա:

Ներկայացուցչական մարմինները հաշվետու են ժողովրդի, ընտրողների առջև: Ժողովրդի կամքով ձևավորված իշխանության համակարգը պետք է լինի թափանցիկ, ժողովրդին հաշվետու, նրա առաջ պատասխանատու: Այդպիսով ժողովրդաիշխանության սահմանադրական սկզբունքից բխում է հասարակության և անհատի առաջ պետության պատասխանատվության սկզբունքը: Այդ սկզբունքի ուժով պետական իշխանության մարմինները, նրանց պաշտոնատար անձինք, լինելով հանրային իշխանության կրողներ, հանրային պատասխանատվություն են կրում ժողովրդի, բնակչության, կոնկրետ անհատի առջև[37]:

**Անձը իր կամ իր կողմից ընտրված ներկայացուցչի կողմից իրավունք ունի մասնակցություն ունենալու ոչ նորմատիվ որոշումների ընդունմանը, որը սույն դեպքում չի պահպանվել, հանրությունը անգամ տեղյակ չի եղել, որ Հայաստանի Հանրապետությունը միանալու է Մաքսային միությանը:**

ՀՀ Սահմանադրությամբ հստակ սահմանազատելով «ժողովրդի իշխանությունը» «պետական իշխանությունից»՝ հիմնական շեշտադրումն արվում է այն առնչությամբ, որ պետական իշխանությունն ածանցվում է ժողովրդաիշխանությունից և այն իրականացվում է իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա: Ժողովրդի իշխանությունը պետական իշխանությամբ չի կարող սահմանափակվել: Պետական իշխանությունը նույնպես պատվիրակվում է ժողովրդի կողմից և իրացվում է հասարակական համաձայնության առարկա հանդիսացող սահմանադրական սկզբունքների ու նորմերի հիման վրա:[38]

**Սույն պարագայում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի անակնկալ հայտարարությունը Մաքսային միությանը միանալու մասին ժողովրդի կողմից պատվիրակված չի եղել այլ իրականացվել է Սերժ Սարգսյանի կամայական որոշման հիման վրա, հակառակ դեպքում, եթե պատվիրակված լիներ՝ Հայաստանի Հանրապետության բնակչությունը Մաքսային միությանը միանալու մասին պաշտոնական հայտարարություն անելուց առաջ իրազեկված կլիներ դրա մասին, որը սույն պարագայում բացակայում է:**

37. Տես՝ 2010թ. ապրիլին հրատարակված ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ գրքի, ՀՀ սահմանադրության 2-ին հոդվածի մեկնաբանությունները 61-րդ էջում
38. Տես՝ 2010թ. ապրիլին հրատարակված ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ գրքի, ՀՀ սահմանադրության 2-ին հոդվածի մեկնաբանությունները 62-րդ էջում

**3.2. Ի կատարումն ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորությունների[39] ՀՀ նախագահի գործողությունները ՀՀ պաշտոնական քաղաքականությանը հակասելու մասին պնդումներ.**

ՀՀ նախագահի կողմից իրականացրած կամայական քաղաքականությունը հակասում է նաև ԵԽ երկրների նախարարների կոմիտեի, «բարեխիղճ կառավարման վերաբերյալ առաջարկությունների» արդյունավետ կառավարման հասկացությանը, համաձայն որի՝ արդյունավետ կառավարումը դա մի գործընթաց է, երբ պետական կառույցները վարում են հանրային գործեր, օգտագործելով պետական միջոցները և երաշխավորում են մարդու իրավունքներ, որպեսզի չլինեն չարաշահումներ և կոռուպցիա, գործի օրենքի առջև հաշվետվողականության սկզբունքը:

ՀՀ կողմից ի դեմս կառավարության 2009թ. ի վեր իրականացվող քաղաքականության ՀՀ և Եվրոպական միության միջև ասոցացման համաձայնագիր կնքելուն ուղղված իրականացվել է բազմաթիվ գործողություններ[40], որի վերաբերյալ ՀՀ ժողովուրդը ունեցել է մի շարք սպասումներ: ՀՀ կողմից տարվող քաղաքականության շրջանակներում կազմվել է բազմաթիվ իրավական փաստաթղթեր, բազմաթիվ այցեր են կատարվել արտերկիր Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների (որի ֆինանսավորումը իրականացվել է ՀՀ պետական բյուջեից), իրականացվել են մի շարք ծրագրեր:

2013թ. հուլիսի 18-ի ՀՀ կառավարության 800-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կառավարության 2013թ. ծրագիրը, ըստ որի բազմաթիվ գործողություններ էն ծրագրվել 2013թ. ընթացքում ՀՀ և ԵՄ համագործակցության շրջանակներում մինչև ասոցացման համաձայնագիր կնքելու գործընթացը[41]

2012թ. հոկտեմբերի 29-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից ստորագրվել է ՀՀ և Եվրոպական Միության միջև «աջակցություն ՀՀ կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա Ասոցացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին. փուլ 2» ֆինանսավորման համաձայնագիրը, որը 2012թ. նոյեմբերի 8-ի ՀՀ նախագահի թիվ ՆՀ-273-Ն[42] հրամանագրով հաստատվել է:

2012թ. հոկտեմբերի 29-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից ՀՀ և Եվրոպական Միության միջև ստորագրված իրավական ակտը հանդիսանում է միջազգային պայմանագիր, որը մինչ օրս առ ոչինչ չի ճանաչվել և ունի իրավաբանական ուժ:

ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի 2013թ. սեպտեմբերի 3-ին Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ. Պուտինի հետ հանդիպման ժամանակ կատարված հայտարարությունը

39. Տես հավելված 7 ՀՀ նախագահի 29.10.2012թ. թիվ ՆՀ-273-Ն հրամանագիր
40. Տես՝ սույն հայցադիմումի 1-ին մասի 1.1.1-1.1.12-րդ ենթակերտը
41. Տես՝ տես սույն հայցադիմումի 1-ին մասի 1.1.12-րդ ենթակետը
42. Տես՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=79022

Մաքսային միությանը միանալու մասին հակասում է ՀՀ կողմից նախկինում ստանձնած պարտավորությունը[43], որը իրավաչափ լինել չի կարող:

ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը և վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ «պետական իշխանությունը իրականացվում է Սահմանադրության և օրենքներին համապատասխան.....»

Եվրոպական դատարանը Բայաթյանի ընդդեմ Հայաստանի[44] գործով արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «դիմումատուի հետապնդումը և դատապարտումը տեղի են ունեցել այն ժամանակ, <u>երբ Հայաստանի իշխանություններն արդեն իսկ պաշտոնապես պարտավորություն են ստանձնել Եվրոպայի Խորհրդի առջև՝ անդամակցությունից հետո որոշակի ժամկետում ընդունել այլընտրանքային ծառայության մասին օրենք:</u>

Այսպես, դիմումատուի դատապարտումը իր համոզմունքների համար ուղղակի հակասում է տվյալ ժամանակահատվածում, ի կատարումն ստանձնած միջազգային պարտավորությունների, Հայաստանում իրականացվող բարեփոխումների և օրենսդրական փոփոխությունների պաշտոնական քաղաքականությանը, և չի կարելի ասել, որ նման հանգամանքների ներքո այն թելադրվել է ճնշող սոցիալական կարիքի արդյունքում»:

Վկայակոչված նախադեպը վերաբերվում է անձի ազատազրկմանը նրա համոզմունքների համար, սակայն այն վերաբերելի է այս խնդրի կարգավորման համար այնքանով, որքանով, երկու դեպքում էլ ՀՀ ստանձնել է միջազգային պարտավորություններ, ուստի սույն գործով կիրառելի է:

Սույն պարագայում ՀՀ կողմից շուրջ 4 տարի իրականացված քաղաքականությունն ուղղված է եղել Ասոցացման համաձայնագրի կնքմանը, որի արդյունքում 33[45] միլիոն դրամ է ծախսվել ՀՀ պետական բյուջեից, որին միանգամից վերջ դրվեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից կատարված մեկ հայտարարությամբ:

### <u>3.3. **Մաքսային միությանը միանալու մասին ՀՀ նախագահի գործողությունները ուղղված պայմանագիր (մաքսային միությանը միանալու մասին) կնքելուն ՀՀ-ը համար անբարենպաստ լինելու մասին պնդումներ.**</u>

3.3.1. Մաքսային միությանը միանալու վերաբերյալ պետությունների իրավունքները և պարտականությունները սահմանված են 2000թ. հոկտեմբերի 10-ի «Եվրասիական

43. Տես՝ սույնհայցադիմումի 1-ին մասի 1.1.8-րդ ենթակերը
44. Տես ՝ Բայաթյանն ընդդեմ հայաստանի Գանգատ թիվ 23459/03 կետ 127
45. Տես՝ հավելված 8-ը (http://www.lragir.am/index/arm/0/country/view/90243)

տնտեսական միության ստեղծման համաձայնագրում» վկայակոչված համաձայնագրի 13-րդ հոդվածում սահմանված է՝ « (….) յուրաքանչյուր պայմանավորվող կողմի ձայների քանակը համապատասխանում է իր կողմից Միության բյուջեում ԵվրԱզԷՍ-ի մարմինների պահպանման և մշտական ներկայացուցիչների հանձնաժողովի նիստերի անցկացման համար կատարվող ներդրման մասնաբաժնով, Բելառուս-15 ձայնով, Ղազախստան-15 ձայնով, Ղրղզստան-7.5 ձայնով, Ռուսաստանի Դաշնություն-40 ձայնով, Տաջիկստան-7.5 ձայնով, Ուզբեկստան-15 ձայնով:

Նույն փաստաթղթի 15-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Միության բյուջեն ձևավորվում է Միության մարմինների գործունեության ապահովման, Միության մարմինների և ԵվրԱզԷՍ-ի մշտական ներկայացուցիչների հանձնաժողովի նիստերի անցկացման համար մասնաբաժնային ներդրմամբ՝ համաձայն հետևյալ սանդղակի». Բելառուս-15%, Ղազախստան-15%, Ղրղզստան-7,5%, ՌԴ-40%, Տաջիկստան-7.5%, Ուզբեկստան-15%:

Վերը վկայակոչած իրավական ակտի մեկնաբանությունը թույլ է տալիս պնդելու, որ Մաքսային միության անդամ պետությունները անմիջականորեն կախված են Ռուսաստանի Դաշնությունից նրան տրված 40% ձայների մեծամասնության շնորհիվ:

ՌԴ-ը ունենալով 40% ձայնի իրավունք ցանկացած որոշման կողմ քվեարկելով միանշանակ ընդունվելու է ՌԴ-ի կողմից կողմ քվեարկած որոշումը:

Այսինքն՝ կարելի է պնդել նաև այն հանգամանքը, որ ՀՀ կողմից Մաքսային միության անդամակցելով, Մաքսային միության կողմից կարող են ընդունվել այնպիսի որոշումներ, որոնք իրենց բնույթով անբարենպաստ պայմաններ կարող են ստեղծել ՀՀ համար, դրանք կարող են լինել իմպերատիվ բնույթի, այսինքն պարտադիր կատարման ենթակա, որը ՀՀ և ԵՄ-ի միջև Ասոցացման համաձայնագիր կնքելու շրջանակներում բացակայում էր:

Ավելին, Մաքսային Միությանն անդամակցելու դեպքում Հայաստանը զիջելու է իր ինքնիշխանության մի մասը, որը կարող է էական նշանակություն ունենալ մեր երկրի հետագա քաղաքականության համար: Ինքնիշխանության զիջելու փաստի մասին Ազատություն TV-ի հետ հարցազրույցում հայտարարել է Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպան Իվան Վոլինկինը[46]:

2013թ. հոկտեմբերի 31-ին lragir.am էլեկտրոնային կայքէջում հրապարակվել է ՀՀ Ազգային ժողովում 2014 թվականի պետբյուջեի նախագծի քննարկման ժամանակ արտաքին գործերի փոխնախարար Զոհրապ Մնացականյանի հայտարարությունը Ասոցացման համաձայնագրում Հայաստանի սուվերենության կորստի վերաբերյալ.

«Երկու կողմերը պատրաստել են մի մեծ համաձայնագիր, որտեղ չի եղել մի կետ, որ Հայաստանն իր սուվերենությունը հանձնելու է[47]»:

46. Տես՝ հավելված 9 http://www.youtube.com/watch?list=PLMQcwD-eh6VjISJjy_A4zN-LWC_JXmwpJ&v=ijFXh0dmHa8#t=2002
47. Տես՝ հավելված 8 (http://www.lragir.am/index/arm/0/country/view/90243)

ՀՀ փոխարտգործնախարարի հայտարարությունը, հիմք է տալիս պնդելու, որ ՀՀ և ԵՄ-ի միջև կնքվելիք Ասոցացման համաձայնագիրը միայն կարող էր ՀՀ համար բարենպաստ պայմաններ ստեղծել, իսկ ինչ վերաբերվում է ՀՀ նախագահի հայտարարությանը Մաքսային միությանը միանալու մասին, այն որևէ կերպ պատճառաբանված չէ, թե ինչ պարտավորություններ և իրավունքներ է ստանձնելու ՀՀ-ն միանալով Մաքսային միությանը:

Ինչ վերաբերվում է Մաքսային միությանը միանալուն, ապա որևէ հիմնավորում և պատճառաբանություն առկա չէ, որ այն ավելի քան բարենպաստ պայմաններ կարող է ստեղծել ՀՀ համար, քան ՀՀ և ԵՄ Ասոցացման համաձայնագիր կնքելը, որի վերաբերյալ նաև հետևյալ կերպ է արտահայտվել ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը azatutyun.am կայքէջում հրապարակմամբ[48].

3.1.2. «Մաքսային միությանը միանալու դիմաց ի՞նչ է ստանալու Հայաստանը Ռուսաստանից» հարցին ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը պատասխանել է հետևյալ կերպ. «Խոսքը գնում է ոչ թե ինչ է տվել Ռուսաստանը, որ մենք միանանք Մաքսային միությանը, այլ խոսքը գնում է նրա մասին, որ Հայաստանն ունի դաշնակցային հարաբերություններ Ռուսաստանի հետ[49] (.....)»:

ՀՀ դաշնակցային հարաբերությունները Ռուսաստանի հետ եղել են շատ վաղուց անգամ, երբ ՀՀ որոշում կայացրեց ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագիր կնքել տվյալ ժամանակահատվածում նույնպես ՀՀ և ՌԴ մինչև առկա էր դաշնային հարաբերություններ, ուստի ՀՀ անունից հանդես եկած արտգործնախարարի հայտարարությունը ընդհանրապես զուրկ է պատճառաբանությունից:

Եվրոպական դատարանը Մոսկալն[50] ընդդեմ Լեհաստանի գործով հայտնել է հետևյալ դիրքորոշումը՝ լավ կառավարման սկզբունքը պահանջում է, որ երբ ինչ-որ մի հանրային հետաքրքրության հարց է նժարին, ապա պետական մարմինները պետք է գործեն լավագույն ժամկետում և լինեն հետևողական: Ցանկալի է, որ պետական մարմինները գործեն մաքսիմալ զգույշ այնպիսի հարցեր որոշելիս, որոնք անձի և անձանց կյանքի համար կարևոր են ինչպիսիք են սոցիալական և նմանատիպ իրավունքները:

Սույն պարագայում ՀՀ նախագահի գործողությունը Մաքսային միությանը միանալու մասին համաձայնագիր կնքելուն չի եղել մաքսիմալ զգուշությամբ, այլ եղել է հապճեպ և չպատճառաբանված:

---

48. Տես՝ հավելված 6-ը (http://www.azatutyun.am/content/article/25105152.html)
49. Տես՝ հավելված 6-ը (http://www.azatutyun.am/content/article/25105152.html)
50. Եվրոպական դատարանի վճիռը թիվ № 10373/05 Մոսկալն ընդդեմ Լեհաստանի

3.3. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչելու որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել սույն օրենսգրքի 65-67-րդ հոդվածներին համապատասխան: Սույն գործով ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից իրականացված վարչարարության արդյունքում ընդունված չէ գրավոր վարչական ակտ, այլ՝ կատարված են գործողություններ, իսկ վարչական մարմինների գործողությունների դեմ հայցատեսակը նախատեսված է ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 68-րդ հոդվածով (տես՝ Վճռաբեկ դատարանի 03.12.2010 Վարչական գործ թիվ ՎԴ/0277/05/09 2010թ որոշումը): Պաշտոնատար անձանց կողմից իրականացրած գործողությունները դրանք ավարտվելու պահից դադարել են իրավաբանական ուժ ունենալուց:

«Վարչական դատավարության» օրենսգրքի 68-րդ հոդվածով նախատեսված հայցատեսակների համար, նույն օրենսգրքի 71-րդ հոդվածով ժամկետային սահմանափակում նախատեսված չէ:

Եթե դատարանը, սույն հայցի վարույթ ընդունելու փուլում, այնուամենայնիվ գտնի, որ իրավունքների ավելի արդյունավետ պաշտպանելու և վերականգնելու նպատակով սույն հայցատեսակը սխալ է ընտրված, ապա դատարանը բոլոր դեպքերում պարտավոր է վարույթ ընդունել սույն հայցը և դատական նիստի ընթացքում պարզել հայցի առարկան և հիմքը:

Այսպիսի իրավական դիրքորոշում է արտահայտել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը ՎԴ/2450/05/11 գործով 15.07.2011թ. «Բողոքը բավարարելու մասին» որոշման մեջ:

Վարչական վերաքննիչ դատարանը որոշման մեջ հղում է կատարել ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ, Կոնվենցիայի 6-րդ հոդվածներին, ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 6-րդ հոդվածին (գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե ("ex officio")), 8, 86-րդ հոդվածներին և հանգել է եզրակացության, որ «եթե վեճը ծագել է հանրային իրավահարաբերություններից և այն վերապահված չէ նույն հոդվածի 2-րդ կետում նշված մարմինների քննությանը, ապա այդ գործը ենթակա է քննության ՀՀ Վարչական դատարանում»:

Կազմակերպությունը իրացնելով ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով երաշխավորված իրավունքը՝ մատնանշում է վերոգրյալ դատական ակտերում դատարանների կողմից օրենքներին տրված մեկնաբանությունները, քանի որ դրանք կիրառելի են սույն հայցի ընդունելիության հարցը լուծելիս:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 68-րդ հոդվածները՝

# ԽՆԴՐՈՄ ԵՄ՝

Ճանաչել ոչ իրավաչափ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2013թ. սեպտեմբերի 3-ի Մաքսային միությանը միանալուն ուղղված գործողությունները (անգործությունը):

Հավելվածների ցանկ:

Հավելված 1: hetq.am էլեկտրոնային էջում հրապարակված Սերժ Սարգսյան. «Ես հաստատեցի Հայաստանի ցանկությունը՝ միանալու Մաքսային միությանը» վերնագրով նյութ:

Հավելված 2: Համատեղ հայտարարություն ՀՀ Նախագահի ՌԴ կատարած այցի արդյունքների վերաբերյալ:

Հավելված 3: 2013թ. սեպտեմբերի 19-ին ՀՀ վարչապետի N 834-Ա որոշում:

Հավելված 4: 2013թ. սեպտեմբերի 19-ին ՀՀ կառավարության կողմից հրավիրված նիստի N 37 արձանագրային որոշում:

Հավելված 5: ՀՀ կառավարության էլեկտրոնային էջում հրապարակված «հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովի նիստում Տիգրան Սարգսյանը և Մաքսիմ Սոկոլովը քննարկել են երկկողմ ռազմավարական կապերի ամրապնդման ուղիները» վերնագրով նյութ:

Հավելված 6: azatutyun.am «Ֆյուլե. Վիլնյուսում Հայաստանի հետ փաստաթուղթ չի ստորագրվ» վերնագրով նյութ:

Հավելված 7: ՀՀ նախագահի 29.10.2012թ. թիվ ՆՀ-273-Ն հրամանագիր

Հավելված 8: lragir.am էլեկտրոնային էջում հրապարակված «ԵՄ Ասոցացման համաձայնագրում չի եղել Հայաստանի սուվերենության դեմ որեւէ կետ» վերնագրով նյութ:

Հավելված 9: 15.11.2013թ. Ազատություն TV հաղորդաշարի Հայաստանում Ռուսաստանի դեսպանի հետ հարցազրույցը էլեկտրոնային կրիչով:

Հավելված 10: Կազմակերպության կանոնադրության և պետական ռեգիստրի վկայականի պատճենները

Հավելված 11: Հայցադիմումը և կից փաստաթղթերը պատասխանողի և ֆինանսների նախարարության կողմից ստանալը հավաստող ապացույց

Հավելված 12: Պետական տուրք վճարելու մասին անդորրագիր:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց